և ձեռամբ շոշափել զէնս և զգեստս զինուորաց պակասութիւն կարգադրել։

ԳԼՈՒԽ ՅԴ.

Ամենայն զինուոր պարտ է պահել զգեստս իւր մաքուր և հերն իւր յօծեալ։

ԳԼՈՒԽ ՅԵ.

Ամենայն զինուոր պարտ է ունենալ զէնս յստակ օծեալ իւղով և պատրաստ։

ԳԼՈՒԽ ՅԶ.

Ամենայն զինուոր պարտ է ունենալ ընդ քսակս իւր։

12 կառտուշ վառյոդ գուլոմն։
4 չախմախի քար։
1 չախմախ բանող։
1 շիշ նօսր եղ վասն օծանելոյ զէնս։

ԳԼՈՒԽ ՅԷ.

Ամենայն զօրագլուխ 'ի ամենայն տեղէ երեսս երկրէ պարտական է կացութիւն զօրաց իւրոց 'ի վերայ թղթոյ ազդ առնէ չորս անգամ 'ի մի տարոյ ըստ իւրաքանչ եղանակի տարոյն պետին իւրոյ այսմ կերպիւ։

Տասնապետն ազդ առնէ հարիւրապետին իւրոյ։